ՔԵԶ ՀԱՄԱՐ, ՀԱՅԱՍՏԱՆ

Քեզ համար նոր գարուն կը գայ,
Եւ պայծառ կը շողայ նորից,
Ձմռան բոցից դու մահաբեր
Կը յառնես ինչպէս փիւնիկ կրկին,
Հայաստան:

Կը զնգայ երգդ ամենուր,
Կուռ կամքով վեր կը պլանաս,
Աստուած պահի քո հողը սուրբ,
Ապրես յաւէտ ու երջանիկ,
Իմ սէր, Հայաստան:

Աշխարհը սեւազգեստ ողբում է քեզ հետ,
Եւ ձեռք է մեկնում կորովի
Անկեղծ եղբայրութեան,
Որ դու ապրես:

Ողջ աշխարհն է սատար դարձել,
Որ կանգուն ու անխախտ մնաս,
Տանջուել ես միշտ, դու նահատակ,
Մոռացուած իմ ժողովուրդ, ապրես,
Հայաստան:

Կը բուժուեն քո վէրքերը խոր,
Թէ նոյնիսկ դու միշտ անիծես
Քո բախտը չար, ուղիդ արնոտ,
Թող կանաչի ճամբադ լուսէ,
Իմ սէր, Հայաստան:

Ոսկեայ արեւը թող ժպտայ մի բուռ քո հողին
Ցար ցնծայ, Հայաստան աշխարհ,
Արցունքդ սրբիր, թող յոյսը քեզ օգնի,
Գօտեպնդուիր, իմ ժողովուրդ:

Քեզ հաւատը թող չլքի,
Գարուններդ նորից կը գան,
Թախծոտ ու սեւ քո աչքերում
Թող անմար արեւ շողայ կրկին,
Հայաստան:

Քո բախտին ինքդ տիրանաս,
Ձայնդ զիլ աշխարհում թնդայ,
Աստուած պահի քո հողը սուրբ,
Ապրես յաւէտ ու երջանիկ,
Իմ ալ, իմ կապոյտ, իմ արեւ
ՀԱՅԱՍՏԱՆ:

Շաղլ Ազնաւուր

digitised by A.R.A.R.@